ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սուրբ Ստեփանոսի տոնը, ի հիշատակումն նախավկա և առաջին մարտիրոսի նահատակության, հանուն Քրիստոսի և հանուն ճշմարտության, ամեն տարի առանձնակի շուքով է նշվում Մայր Աթոռում:

Սուրբ Ստեփանոսի տոնը համարվում է նաև Մայր Աթոռի սարկավագների տոնական օրը և առավել ևս նշանավորվում հոգևոր ճեմարանի Գ. լսարանի ուսանողների սարկավագական ձեռնադրությամբ:

Այս տարի նույնպես, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանի միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, դեկտեմբերի 26-ին սարկավագական ձեռնադրություն են ստանում Գ. լսարանի երեք ուսանողներ՝ Վարդգես Մկրտչյանը, Գարուշ Լազարյանը և Կառլեն Պետրոսյանը՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

Դեկտեմբերի 25-ին, ուրբաթ օրը, ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնակ, Սուրբ Ստեփանոսի խորանի առջև, որից հետո Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը դպրության չորս աստիճաններ է շնորհում Գ. դասարանի 13 ուսանողների, ուրար կրելու իրավունք՝ Ա. լսարանի 14 ուսանողների, և կիսասարկավագական աստիճան՝ Գ. լսարանի երեք ուսանողների:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 26-ին, տեղի է ունենում առավոտյան հանդիսավոր ժամերգություն: «Փառք ի բարձունս»-ի ժամանակ Մայր Աթոռի վեց սարկավագներ, սաղավարտ ի գլուխ և բուրվառներ ի ձեռին, զույգ-զույգ դուրս են գալիս ավանդատնից և խնկարկում Սուրբ Ստեփանոսի խորանի առջև: Հանդիսավորությամբ հնչում են «Նախասարկավագ և առաջին մարտիրաս» և «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» մեղեդիները, որով և ավարտվում է արարողությունը:

Ժամը 10.30-ին սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբղ. Զաքալյանը:

Սուրբ գրական ընթերցումներով, ըստ ձեռնադրության Մաշտոցի, սկսվում է Գ. լսարանի երեք ուսանողների սարկավագական ձեռնադրությունը, որն ավարտվում է ձեռնադրիչ սրբազան հոր «Պահպանիչ»-ով:

Այնուհետև շարունակվում է ս. պատարագը:

«Հայր մեր»-ից առաջ խրատական քարոզ է խոսում պատարագիչ հայր սուրբը՝ հանգամանորեն վեր հանելով Ստեփանոս

նախաարարկավագի նահատակության հոգևոր նշանակությունը Եկեղեցու կյանքում, մաղթելով նաև նորընծաներին հաստատակամություն և նվիրում իրենց ուխտի մեջ:

Հավարտ ս. պատարագի Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը Վեհափառ Հայրապետին են ներկայացնում Մայր Աթոռի ավագ և նորընծա տասը սարկավագներին:

Նորին Սրբությունը շնորհավորում է սարկավագների տոնը, տալիս Իր հայրական օրհնությունն ու հորդորները՝ մաղթելով, որ նրանք, կրկին վերանորոգված օրվա խորհրդով, իրենց անմնացորդ նվիրումը բերեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ Եկեղեցու հոգևոր սպասավորության սուրբ գործին:

Վերջում բոլոր սարկավագները աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու նվերները:

Վարդգես սարկավագ Մկրտչյան. ծնվել է 1950 թվականի մայիսի 25-ին Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցում: 1973 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն ավարտել է 1979 թվականին: Նույն թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Գարուշ սարկավագ Լազարյան. Ծնվել է 1955 թվականի փետրվարի 23-ին Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Հովհ. Պողոսյանի անվան դպրոցում: 1974 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն ավարտել է 1979 թվականին: Նույն թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

Կարեն սարկավագ Պետրոսյան. Ծնվել է 1956 թվականի սեպտեմբերի 13-ին Թբիլիսիում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Հովհ. Պողոսյանի անվան դպրոցում: 1979 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ լսարանում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի ավագ և նորընծա սարկավագների տոնը և մաղթում, որ նրանք իրենց ապագա եկեղեցանվեր գործունեությամբ արդարացնեն Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և լինեն «մշակք առանց ամօթոյ»:



ՄԻ ՊԱՀ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ